

Սասունցի Դավիթը (Հովհաննես Թումանյան)



Exported from Wikisource on 08/05/20

Մասունցի Դավիթը

Հովհաննես
Թումանյան

I

Առյուծ-Մըհերը, զարնով դյուցազուն,
Քառասուն տարի իշխում էր Մասուն.

Իշխում էր ահեղ, ու նրա օրով
Հավքն էլ չէր անցնում Մասմա սարերով:
Մասմա սարերից շա՛տ ու շատ հեռու
Թընդում էր նրա հրոշակն ահարկու,
Խոսվում էր իր փառքն, արարքն անվեհեր.
Հազար բերան էր— մի Առյուծ-Մըհեր:

II

Էսպես, ահավոր առյուծի նըման,

Մասմա սարերում նըստած էր իշխան
Քառասուն տարի: Քառասուն տարում
«Ա՛խ» չէր քաշել նա դեռ իրեն օրում.
Բայց հիմի, երբ որ եկավ ծերացավ,
Էն անահ սիրտը ներս սողաց մի ցավ:
Սկըսավ մըտածել դյուցազուն ծերը.
— Հասել են կյանքիս աշնան օրերը,
Շուտով սև հողին կերթան ես գերի,

Կանցնի ծրխի պես փառքը Մըհերի,
Կանցնեն և՛ անուն, և՛ սարսափ, և՛ ահ,

Ին անտեր ու որբ աշխարքի վրրա
Ոտի կրկանգնեն հագար քաջ ու դև . . .
Մի ժառանգ չունեմ՝ իմ անցման ետև
Ին թուրը կապի, Մասուն պահպանի . . .
Ու միտք էր անում հրսկան ծերունի:

III

Մի օր էլ՝ էն գորշ հոնքերը կիտած,
Երբ միտք էր անում, երկընքից հանկարծ
Մի հուր-հրրեղեն հայտնըվեց քաջին,
Ոտները ամպոտ կանգնեց առաջին:
— Ողջո՛ւյն մեծագոր Մասնա հրսկային .

Քու ձենը հասավ աստրծու գահին,
Ու շուտով նա քեզ մի գավակ կրտա:
Բայց լավ իմանաս, լեռների՛ արքա,
Որ օրը որ քեզ ժառանգ է տըվել,
Էն օր կըմեռնեք քու կինն էլ, դու էլ:
— Իր կամքը լինի, ասավ Մըհերը.
Մենք մահինն ենք միշտ ու մահը մերը,
Բայց որ աշխարքում ժառանգ ունենանք,
Մենք էլ նրբանով անմեռ կըմընանք:
Հրրեշտակն էստեղ ցոլացավ նորից,

Ու էս երջանիկ ավետման օրից
Երբ ինը ամիս, ինը ժամն անցավ,
Առյուծ-Մըհերը գավակ ունեցավ:
Դավիթ անվանեց իրեն կորյունին,
Կանչեց իր ախպեր Ձենով Օհանին,
Երկիրն ու որդին ավանդեց նրբան,
Ու կինն էլ, ինքն էլ էն օրը մեռան:

IV

Էս դարում Մըսըր անհաղթ ու հրգոր
Մըսրա-Մելիքն էր նըստած թագավոր:
Հենց որ իմացավ՝ էլ Մըհեր չըկա,

Վեր կացավ կըռվով Սասունի վըրա:
Ձենով Օհանը ահից սարսափած՝
Թըշնամու առաջն ելավ գըլխաբաց,
Աղաչանք արավ, ընկավ ոտները.
— Դու եղիր, ասավ, մեր գըլխի տերը,
Ու քու շըվաքում քանի որ մենք կանք,
Քու ծառան լինենք, քու խարշը միշտ տանք,
Միայն մեր երկիր քարուքանդ չանես
Ու քաղցըր աչքով մեզ մըտիկ անես:
— Չէ՛, ասավ Մելիք, քու ամբողջ ազգով

Անց պիտի կենաս իմ թըրի տակով,
Որ Էգուց-Էլօր, ինչ էլ որ անես,
Ոչ մի սասունցի թուր չառնի իմ դեն:
Ու գընաց Օհան՝ բոլոր-բովանդակ
Սասունը բերավ, քաշեց թըրի տակ.
Մենակ Դավիթը, ինչ արին-չարին,
Մոտ չեկավ դուշման Մելիքի թըրին:
Եկան քաշեցին՝ թե գոռով տանեն,
Թափ տըվավ, մարդկանց գըցեց դես ու դեն,
Փոքրիկ ճըկույթը մի քարի առավ,

Ապառաժ քարից կըրակ դուրս թըռավ:
— Պետք է սպանեն Էս փոքրիկ ծուռին,
Ասավ թագավորն իրեն մեծերին:
— Թագավո՛ր, ասին, դու Էսքան հրգոր,
Թըրիդ տակին է ողջ Սասունն Էսօր.
Ի՞նչ պետք է անի քեզ մի երեխա,
Թեկուզ իր տեղով հենց կըրակ դառնա:
— Դո՛ւք գիտեք, ասավ Մըսրա թագավոր,
Բայց թե իմ գըլխին փորձանք գա մի օր,
Էս օրը վըկա,

Մըրանից կըգա:

Էս որ պատահեց, մեր Դավիթ հրսկան
Մի մանուկ էր դեռ յոթ-ութ տարեկան .
Մանուկ եմ ասում, բայց էնքան ուժեղ,
Որ նրա համար թե մարդ,— թե մրժեղ:
Բայց վա՛յ խեղճ որբին աշխարքի վրա,
Թեկուզ Առյուծի կորյուն լինի նա:
Ձենով Օհանին ուներ մի չար կին:
Մին-երկու լրոեց, մի օր էլ կարգին
Իրեն մարդու հետ սկրսավ կրովել.

— Ես մենակ հոգի, հագար ցավի տեր,
Ի՛նչ ես ուրիշի եթիմը բերել,
Նըստեցրել գրլխիս պարսպ հացակեր . . .
Հո՛ղեմ գրլուխը . . . ես գերի հո չե՞մ՝
Ամենքի քեֆի ետևից թըռչեմ . . .
Մի կուռ կորցրո՛ւ, կարգի՛ր մի բանի,
Գընա, իր համար աշխատանք անի . . .
Ու հետն սկրսավ ողբալ ու կոծել,
Իր օրը սրգալ, իր բախտն անիծել,
Թե անբախտ եղավ աշխարքի միջում,

Ոչ մի տեր ունի, ոչ մարդն է խըղճում . . .
Գընաց Օհանը երեխի ոտի
Մի գույգ ոտնաման բերավ երկաթի,
Երկաթի մի կոռ շալակին դրրած,
Ու արավ Սասնա քաղքի գառնարած:

VI

Քրշեց գառները մեր հովիվ հրսկան,
Ելավ Սասունի սարերն աննըման .
«Է՛յ ջան, սարե՛ր,
Սասնան սարե՛ր . . . »
Որ կանչեց, նրա ձենից ահավոր

Դըղորդ-դըմբըմբոցն ընկավ սար ու ձոր .
Վայրի գազաններ բըներից փախան,
Քարեքար ընկան, դատարկուն եղան:
Դավիթը ընկավ նրանց ետևից,
Որին մի սարից, որին մի ձորից—

Աղվես, նապաստակ, գել, եղնիկ բըռնեց,
Հավաքեց, բերավ, գառներին խառնեց,
Իրիկվան քրշեց ողջ Սասնա քաղաք:
Կաղկա՛նձ ու ոռնո՛ց, աղմո՛ւկ, աղաղա՛կ . . .
Քաղքըցիք հանկարծ մին էլ էն տեսան՝

Գալիս են հըրես անհամար գագան.
«Վա՛յ, հարա՛յ, փախե՛ք . . .»
Մեծեր, երեխեք
Սըրտաճաք եղած,
Գործները թողած,
Որը տուն ընկավ, որը ժամ, խանութ,
Ու ամուր փակեց դուռն ու լուսամուտ:
Դավիթը եկավ, կանգնեց մեյդանում .
— Վա՛հ, էս մարդիկը ի՛նչ վաղ են քընում.
Հե՛յ ուլատեր, հե՛յ գառնատեր .

Ելե՛ք, շուտով բացեք դըռներ.
Ով մինն ուներ— տասն եմ բերել,
Ով տասն ուներ— քըսանն արել...
Շուտով ելե՛ք, եկե՛ք, տարե՛ք,
Ձեր գառն ու ուլ գոմերն արեք:

Տեսավ՝ չեն գալի, դուռ չեն բաց անում,
Ինքն էլ մեկնըվեց քաղքի մեյդանում,
Գըլուխը դըրավ մի քարի՝ մընաց,
Ու մուշ-մուշ քընեց մինչև լուսաբաց:
Լուսին իշխաններ ելան միասին,

Գընացին Ձենով Օհանին ասին.
— Տո՛ Ձենով Օհան, տո՛ մահի տարած,
Էս խենթը բերիր, արիր գառնարած,
Ոչ գառն է ջոկում, ոչ գելն ու աղվես,
Գագանով լըցրեց մեր քաղաքն էսպես,
Աստված կըսիրես՝ դի՛ր ուրիշ բանի,
Թե չէ էս խա՛լխին լեղաճաք կանի:

VII

Ելավ Օհանը, Դավթի մոտ գրնաց.
— Հորեղբայր Օհան, հեռո՛ւ եկ, կամա՛ց,
Ուլեր կըփախչեն:— Մին էլ էնտեղից

Մի բոց նապաստակ, ականջները ցից,
Խրտնեց ու ահից դուրս պրծավ հանկարծ:

Դավիթն էր. ելավ, ետևից ընկած
Էն սարը քրշեց, ետ բերավ էս ձոր,
Բերավ, ուլերին խառնեց նորից նոր:
— Օ՛ֆ, ի՛նչ դրժար է, հորեղբայր Օհան .
Ասոված օխնել է էն սև-սև ուլեր,
Անա բոցալուկ էս ուլեր, որ կան,
Փախչում են, ցրվում ողջ սարերն ի վեր .
Էնքան են երեկ վազել, չարչարվե՛լ,

Մինչև հավաքել ու տուն են բերե՛լ...
Նայեց Օհանը, որ Դավթի հագին
Ոտնաման չի էլ մընացել կարգին,
Մահակն էլ մաշվել, մինչ բուռն է հասել,
Մի օրվա միջում էնքան է վազել:
— Դավի՛թ ջան, ասավ, շեն թողնի էսպես,
Բոցալուկ ուլեր չարչարում են քեզ.
Էզուց նախիրը կըտանես արոտ:
Ասավ Օհանը ու մյուս առավոտ
Գրնաց, նորից նոր մեր Դավթի ոտի

Մի ջուխտ նոր տրրեխ բերավ երկաթի,
Երկաթի մի կոռ հարյուր լրդրական
Ու շինեց Սասնա քաղքի նախրապան:

VIII

Քրշեց նախիրը մեր նախորդ հրսկան,
Ելավ Սասունի սարերն աննըման:
«Է՛յ ջան, սարե՛ր,
Սասնան սարե՛ր,
Ի՛նչ անուշ է
Ձեր լանջն ի վեր...»
Որ կանչեց, նրրա ձենից ահավոր

Դրողդոց-դըմբդըմբոցն ընկավ սար ու ձոր:
Վայրի գագաններ բըներից փախան,
Քարեքար ընկան, դատարկուն եղան:
Դավիթն էր. ընկավ նրանց ետևից,
Որին մի սարից, որին մի ձորից,
Գել, ինձ, առյուծ, արջ ու վագրը բըռնեց,
Հավաքեց, բերավ, իր նախրին խառնեց
Ու առաջն արավ դեպ Սասնա քաղաք:
Ռոնո՛ց, մըռնճյո՛ւն, աղմո՛ւկ, աղաղա՛կ...
Վախկոտ քաղքըցիք մին էլ ի՛նչ տեսան,

Հենց քաղքի վըրա անհամար գագան...

«Վա՛յ, հարա՛յ, փախե՛ք...»

Մեծեր, երեխեք

Սըրտաճաք եղած,

Գործները թողած

Փախան, ներս ընկան տուն, ժամ կամ խանութ,

Ամուր փակեցին դուռն ու լուսամուտ:

Դավիթը եկավ կանգնեց մեյդանում.

— Վա՛հ, էս քաղքըցիք ի՛նչ վաղ են քընում:

Հե՛յ կովատեր, հե՛յ գոմշատեր,

Ելե՛ք, շուտով բացեք դըռներ,

Ով մինն ուներ— տասն եմ բերել,

Ով տասն ուներ— քըսանն արել:

Շուտով ելե՛ք, եկե՛ք, տարե՛ք,

Ձեր եզն ու կով գոմերն արեք:

Տեսավ՝ չեն գալի, դուռ չեն բաց անում,

Ինքն էլ մեկնըվեց քաղքի մեյդանում,

Գըլուխը դըրավ մի քարի, մընաց,

Ու մուշ-մուշ քընեց մինչև լուսաբաց:

Լուսին իշխաններ ելան միասին,

Գընացին Ձենով Օհանին ասին.

— Ամա՛ն, քեզ մատաղ, ա՛յ Օհան ախպեր,

Մեր եզն ու մեր կով թող մընան անտեր,

Միայն սրանից ազատ արա մեզ:

Ոչ արջն է ջոկում, ոչ գոմեշն ու եզ,

Մի օր էս քաղքին փորձանք կըբերի,

Արջերոց կանի, կըտա կավերի:

IX

Դավիթ չըդատավ, մի կրրա՛կ դատավ:
Ճարը կըտըրված՝ Օհանը բերավ
Նետ-աղեղ շինեց ու տըվավ իրեն՝

Գընա, որս անի սարերի վըրեն:
Դավիթ նետ-աղեղն առավ Օհանից,
Հեռացավ Սասնա քաղքի սահմանից
Ու դատավ որսկան: Գնաց, մի կորկում
Լոր էր սպանում, ճնճղուկ էր զարկում,
Մըթանը գընում իրեն հոր ծանոթ
Աղքատ, անորդի մի ծեր կընկա մոտ,
Վիշապի նըման, երկա՛ր, ահագի՛ն
Մեկնըվում, քընում կըրակի կողքին:
Մի օր էլ, երբ որ իր որսից դարձավ,

Պատավը վըրեն սաստիկ բարկացավ.
— Վա՛յ Դավիթ, ասավ, մահըս տանի քեզ,
Դո՞ւ պետք է էն հոր զավակը լինե՛ս:
Ձեռից ու ոտից ընկած մի ծեր կին—
Ես եմ ու էն արտն աստըծու տակին,
Ինչո՞ւ ես գընում, տափում, տըրորում,
Իմ ամբողջ տարվան ապրուստը կըտըրում:
Թե որսկան ես դու— նետ-աղեղըդ ա՛ռ,
Ծըծմակա գըլխից մինչև Մեղանսար
Քու հերը ձեռին մի աշխարհ ուներ,

Որսով մեջը լի որսի սար ուներ.
Եղնիկ կա էնտեղ, այծյամ ու պախրա.
Կարո՞ղ ես— գընա, էնտեղ որս արա:
— Ի՞նչ ես, ա՛յ պատավ, էլ ինձ անիծում.
Ես ջահիլ եմ դեռ, ես նոր եմ լըսում:
Ո՞րտեղ է հապա սարը մեր որսի...
— Գընա՛, հորեղբայրդ—Օհանը կասի:

X

Հորեղբոր շենքում մյուս օրը ծեգին
Դավիթը կանգնեց աղեղը ձեռքին:
— Հորեղբա՛յր Օհան, ինչո՞ւ չես ասել՝

Իմ հերը որսի սար է ունեցել,
Այծյամ կա էնտեղ, եղջերու, կրխտար.
Վեր կաց, հորեղբա՛յր, տար ինձ որսասար:
— Վա՛յ, կանչեց Օհան, էդ քու խոսքը չէր,
Էդ ով քեզ ասավ, լեզուն պապանձվեր:
Էն սարը, որդի՛, գրնաց մեր ձեռից,
Էն սարի որսն էլ գրնաց էն սարից,
Էլ չկան այծյամ, եղջերու, կրխտար:
Քանի լուսեղեն քու հերը դեռ կար,
(Է՛յ գիդի օրեր—ո՛րտեղ եք կորել),

Ես շատ եմ էնտեղ որսի միս կերել...
Քու հերը մեռավ, աստված խրոովեց,
Մըսրա թագավոր գորքեր ժողովեց,
Եկավ, մեր երկիր քարուքանդ արավ,
Էս սարի որսն էլ թալանեց, տարավ.
Եղնիկը գրնաց, եղջերուն գրնաց...
Մեր գիրն էլ հալբաթ էսպես էր գրրած:
Անցել է, որդի, քու բանին գրնա,
Մըսրա թագավոր ձենըդ կիմանա...
— Մըսրա թագավոր ինձ ի՞նչ կանի որ...

Ես ի՞նչ եմ հարցնում Մըսրա թագավոր.
Մըսրա թագավոր թող Մըսրը կենա,
Իմ հոր սարերում ի՞նչ գործ ունի նա...
Վեր կաց, հորեղբա՛յր, նետ-աղեղդ առ,
Կապարճըդ կապի՛ր, գրնանք որսասար:
Ելավ Օհանը ճարը կըտըրված,
Գրնացին տեսան՝ էլ ի՞նչ որսասար.
Անտառը ջարդած, պարիսպն ավերած,
Բուրգերը արած գետնին հավասար...

XI

Գիշերը հասավ, մընացին էնտեղ:

Ձենով Օհանն էր, իր նետն ու աղեղ
Դրրավ գլխի տակ, հանգիստ խրոչնակաց.
Դավիթը մընաց մըտքի ծովն ընկած:
Մին էլ նկատեց, որ մութը հեռվում
Մի թեժ, փայլփլուն կրրակ է վառվում:
 Էն լուսը բրոնած՝
 Վեր կացավ, գրնաց,
Գրնաց ու գրնա՛ց, բարձրացավ մի սար,
Բարձրացավ, տեսավ մի մեծ մարմար քար
 Կիսից պատրոված,

 Ու միջից վառված
Բըխում է լուսը պա՛րզ, քուլա-քուլա՛,
Բարձրանում, իջնում ետ քարի վրրա:
Վար իջավ Դավիթ Էնտեղից կրրկին,
Վար իջավ, կանչեց Ձենով Օհանին.
 — Ե՛լ, հորեղբա՛յր, քանի՞ քրնես,
 Ե՛լ, Էն պայծառ լուսը մի տես:
 Լուս է իջել բարձրը սարին,
 Բարձրը սարին, մարմար քարին:
 Ե՛լ, հորեղբայր, անուշ քրնից.

 Էն ի՞նչ լուս է բըխում քարից:
 Ելավ, խաչ քաշեց Օհանն երեսին,
 — Է՛յ, որդի՛, ասավ, մեռնեմ իր լուսին,
 Էն մեր Մարութա սարն է գորավոր:
 Էն լուսի տեղը կանգնած էր մի օր
 Սասմա ապավեն, Սասմա պահապան
Մեր սուրբ Տիրամոր վանքը Չարխափան:
 Մըշտական, երբ որ կրո՞իվ էր գրնում,
 Էնտեղ էր քու հերն իր աղոթքն անում:
 Քու հերը մեռավ, աստված խրոռվեց,

 Մըսրա թագավոր գորքեր ժողովեց,
 Մեր վանքն էլ եկավ քանդեց Էն սարում,
 Բայց դեռ սեղանից լուս է բարձրանում...

XII

Դավիթը էս էլ երբ որ իմացավ,
— Անո՛ւշ հորեղբայր, հորեղբա՛յր, ասավ,
Որբ եմ ու անտեր աշխարքի վրրա,
Հեր չունեն՝ դու ինձ հերություն արա՛:
Էլ չեմ իջնի ես Մարութա սարից,
Մինչև չըշինեն մեր վանքը նորից:
Քեզանից կուզեմ հինգ հարյուր վարպետ,

Հինգ հազար բանվոր մըշակ նըրանց հետ.
Որ գան՝ էս շաբաթ կանգնեն ու բանեն,
Առաջվան կարգով մեր վանքը շինեն:
Գընաց Օհանը ու բերավ իր հետ
Հինգ հազար բանվոր, հինգ հարյուր վարպետ:
Վարպետ ու բանվոր եկան կանգնեցին,
Չըրը՛խկ հա թըրը՛խկ նորից շինեցին,
Առաջվան կարգով, փառքով փառավոր
Բարձրը Մարութա վանքը Տիրամոր:
Ցըրված միաբանք ետ նորից եկան,

Նորից թընդացին աղոթք, շարական .
Ու երբ շեն արավ հոր վանքը նորից,
Ցած իջավ Դավիթ Մարութա սարից:

XIII

Համբավը տարան Մըսրա Մեկիքին.
— Հապա՛ չես ասիլ՝ Դավիթը կըրկին
Հոր վանքը շինել, իշխան է դառել,
Դու օխտը տարվան խարջը չես առել:
Մեկիք գայրացավ.
— Գընացե՛ք, ասավ,
Բաղին, Կոզբաղին,

Սյուդին, Չարխաղին,
Սասնա քար ու հող տակն ու վեր արեք,
Իմ օխտը տարվան խարաջը բերեք:
Քառսուն կույս աղջիկ բերեք արմաղան,
Քառսուն կարճ կընիկ, որ երկանք աղան,
Քառսունն էլ երկար, որ ուղտեր բառնան,
Իմ տանն ու դրոռն դարավաշ դառնան:

Ու Կոզբաղին առավ գորքեր.
— Գըլխի՛ս վըրա, ասավ, իմ տեր.
Գընամ հիմի քանդեն Սասուն,

Կանայք բերեն քառսուն-քառսուն,
Քառսուն բեռնով դեղին ոսկի,
Տեղը ջընջեն հայոց ազգի:
Ասավ, Մըսրա աղջիկ ու կին
Պար բըռնեցին ու երգեցին.
— Մեր Կոզբաղին գընաց Սասուն,
Կանայք բերի քառսուն-քառսուն,
Քառսուն բեռնով ոսկի բերի,
Մեր ճակատին շարան շարի,
Կարմիր կովեր բերի կըթան՝

Գարնան շինենք եղ ու չորթան:
Չա՛ն Կոզբաղին, քաջ Կոզբաղին,
Սասնա Դավթին զարկեց գետին:
Ու Կոզբաղին փըքված, ուռած,
— Շնորհակալ եմ, քույրե՛ր, գոռաց,
Մինչև գալըս դեռ համբերեք,
Էն ժամանակ պիտի պարեք...

XIV

Էսպես երգով,
Չոռով-գորքով
Գոռ Կոզբաղին մըտավ Սասուն.

Օհան լըսեց՝ կապվեց լեզուն:
Աղ ու հացով,
Լաց ու թացով
Առաջն ելավ,
Խընդիրք արավ.
— Ինչ որ կուզես՝ առ, տա՛ր, ամա՛ն.
Վարդ աղջիկներ, կանայք Սասնան,
Դառր դադած դեղին ոսկին,
Միայն թե գըթա մեր խեղճ ազգին,
Մի՛ կոտորիր, մի՛ տար մահու,

Վերև՝ աստված, ներքև՝ դու...
Ասավ, բերավ շարան-շարան
Վարդ աղջիկներ, կանայք Սասման:
Ու Կոզբաղին կանգնեց, ջոկեց,
Մարագն արավ, դուռը փակեց,
Քառսուն կույս աղջիկ, սիրուն, արմաղան,
Քառսուն կարճ կրնիկ, որ երկանք աղան,
Քառսուն էլ երկար, որ ուղտեր բառնան,
Մըսրա Մելիքին դարավաշ դառնան:
Դեզ-դեզ կիտեց դեղին ոսկին.

Սև սուգ կալավ հայոց ազգին:

XV

Հե՛յ, ո՞ր ես, Դավի՛թ, հայոց պահապան,
Քարը պատրովի— դո՛ւրս արի մեյդան:
Քանդած հոր վանքը որ շինեց նորից,
Ցած իջավ Դավիթ Մարութա սարից,
Ժանգոտած, անկոթ մի շեղբիկ գըտավ,
Գընաց՝ պատավի շաղգամը մըտավ:
Պատավն էր. եկավ՝ անե՛ծք, աղաղա՛կ.
— Վա՛յ, խելա՛ն Դավիթ, շաղգամի տեղակ
Դու կրրակ ուտես, ցավ ուտես, ասավ,

Քու աչքն աշխարքում մենակ ի՞նձ տեսավ.
Կորեկըս արիր գետնին հավասար,
Էս էր մընացել ձըմեռվան պաշար,
Էս էլ կըտրում ես,
Էլ ո՞նց ապրեմ ես:
Թե կըտրիճ ես դու, աղեղդ ա՛ն գընա՛,
Քու հոր աշխարքին տիրություն արա՛,
Քու հոր գանձը կե՛ր,
Թողել ես անտեր,
Մըսրա թագավոր դըրկել է՝ տանի:

— Էլ ի՞նչ ես վըրես բարկանում, նանի՛,
Էդ ի՞նչ ես ասում, ես չեմ հասկանում,
Մըսրա թագավոր մեր ի՞նչն է տանում:
— Մըսրա թագավոր մեր ի՛նչն է տանում...

Մըսրա թագավոր քու աչքն է հանում,
Դանդալոշ Դավիթ, դըրկել է հըրեն,
Եկել են Սասնա քաղաքի վըրեն
Բադին, Կոզբադին,
Սյուդին, Չարխադին,
Թալան են տալի բովանդակ Սասում.

Քառսուն բեռ ոսկի խարաջ են ուզում,
Քառսուն կույս աղջիկ սիրուն, արնաղան,
Քառսուն կարճ կընիկ, որ երկանք աղան,
Քառսուն էլ երկար, որ ուղտեր բառնան,
Մըսրա Մելիքին դարավաշ դառնան:
— Ի՞նչ ես, ա՛յ պատավ, էլ ինձ անիծում.
Տույց տուր մի տեսնեն— ո՞րտեղ են ուզում:
— Ո՞րտեղ են ուզո՛ւմ... Մահըս տանի քե՛զ.
Դո՛ւ պետք է էն հոր գավակը լինե՛ս...
Եկել ես՝ էստեղ շաղգամ ես լափում...

Ոսկին Կոզբադին ձեր տանն է չափում,
Աղջիկներ փըլել մարագն են լըցրած:
Շաղգամը թողեց Դավիթ ու գընաց:
Տեսավ՝ Կոզբադին իրենց տան միջին,
Չափում է ոսկին թեղած առաջին,
Սյուդին, Չարխադին պարկերն են բըռնել,
Ձենով Օհանն էլ շըլինքը ծըռել,
Կանգնել է հեռու, ձեռները ծոցին:
Տեսավ, աչքերը արնով լըցվեցին:
— Վե՛ր կաց, Կոզբադին, հեռո՛ւ կանգնիր դու,

Իմ հոր ոսկին է— ես եմ չափելու:
— Կոզբադին ասավ.— Է՛յ, Ձենով Օհան,
Կըտաս— տո՛ւր խարջը էս օխտը տարվան,
Թե՛ չէ՛ կըզնամ, միրուքըս վըրկա,
Մըսրա-Մելիքին կըպատմեն, կըզա,
Ձեր Սասնա երկիր քար ու քանդ կանի,
Տեղը կըվարի, բոստան կըցանի:
— Կորե՛ք, անզգամ դուք Մըսրա շըներ,
Բա չե՛ք իմացել դուք Սասնա ծըրեր...
Մեռա՞ծ եք կարծում դուք մեզ, թե՞ շըվաք,

Կուզեք մեր երկիր դըներք խարջի տա՛կ...
Բարկացավ Դավիթ, չափը շըպըրտեց,

Տըվավ Կողբադնի գըլուխը շարդեց,
Չափի փըշրանքը պատն անցավ, գընաց,
Մինչև օրս Էլ դեռ գընում Է թըռած:
Ու ելան՝ թափած ոսկին թողեցին,
Հայոց աշխարքից փախան գընացին
Բադին, Կոզբադին,
Սյուդին, Չարխադին:

XVI

— Վա՛յ, վա՛յ, հորեղբա՛յր, ի՛նչ ասեմ ես քեզ .

Մենք ունենք Էստեղ դեղին ոսկու դեզ,
Դու արել ես ինձ քաղաքի ծառան,
Դու թողել ես ինձ օտարի դըռան...
Հորեղբայրն ասավ.— Ա՛յ խենթ, խելագար,
Ոսկին պահել եմ Մելիքի համար,
Որ քաղցըր լինի աչքը մեզ վըրա:
Չըտըվիր, հիմի որ գորք առնի՝ գա,
Սասնա քար ու հող հեղեղի, տանի,
Ռ՛վ դեմը կերթա, ո՛վ կըռիվ կանի:
— Դու կա՛ց, հորեղբա՛յր, թող գա, ե՛ս կերթամ,

Կերթամ, ես նըրան պատասխան կըտամ:

Ու մութ մարագի դըռանը գարկեց,
Փակած աղջիկներ հանեց, արձակեց:
— Գընացե՛ք, ասավ, ազատ ապրեցե՛ք,
Սասունցի Դավթին արև խընդրեցեք:

XVII

Էսպես շարդված, արյունլըվա
Փախան, ընկան հողը Մըսրա
Բադին, Կոզբադին
Սյուդին, Չարխադին:
Մըսրա կանայք հեռվից տեսան,

Հեռվից տեսան, ուրախացան
Ու ծափ տրվին կրտերներին.
— Եկա՛ն, եկա՛ն, բերի՛ն, բերի՛ն...
Մեր Կոզբաղին գնաց Սասուն,
Կանայք բերավ քառսուն-քառսուն,
Կարմիր կովեր բերավ կրթան՝
Գարնան շինենք եղ ու չորթան...
Հենց մոտեցան, նրկատեցին,
Ծափ ու խրնդում ընդհատեցին,
Քրրքրջացին

Ու կանչեցին.

— Է՛յ, Կոզբաղին մեծաբերան,
Էդ ո՞րտեղից լերան-լերան,
Լերան-լերան կըգաս փախած,
Հաստ գրլուխըդ կիսից ճըղած:
Էն դո՞ւ չասիր՝ գընամ Սասուն,
Կանայք բերեմ քառսուն-քառսուն,
Քառսուն բեռնով ոսկի հանեմ,
Հայոց երկիր ավեր անեմ:
Գացիր Սասուն քանց գել գագան,

Ետ ես գալի քանց շուն վագան...
Ու Կոզբաղին խիստ բարկացավ.
— Սո՛ւս կացեք դուք, լըրբե՛ր, ասավ.
Ձեր մարդիկն եք տեսել դուք դեռ,
Դուք չեք տեսել Սասնա ծըռեր:
Սասնա ծըռեր լերան-լերան,
Նետեր ունեն մի-մի գերան.
Սասնա երկիր քար ու կապան,
Դըժար սարեր, ձոր ու ծապան.
Նըրանց խոտեր—ինչպես կեռ թուր,

Չորք ջարդեցին երեք հարյուր...
Ասավ ու էլ չառավ դադար,
Վըռագ-վըռագ, գըլխապատառ
Վագեց իրեն թագավորին:
Խընդաց թագվորն իր աթոռին:
— Ապրե՛ս, ապրե՛ս, քաջ Կոզբաղին,
Արժե՛ կախեմ ես քու ճըտին
Մեր դուզդունի մեծ նըջանը—

Պարզև քու մեծ հաղթությամբ:
Ո՞ր են, հապա առաջըս բեր

Սասնա ոսկին ու աղջիկներ:
Ասավ Մելիք, ու Կոզբաղին
Գրլուխ տրվավ մինչև գետին,
— Ապրա՛ծ կենաս, մեծ թագավոր,
Զոռով փախա ես ձիավոր,
Ո՞նց բերեի Սասնա ոսկին:
Մի խենթ ծընվեց հայոց ազգին,
Ոչ ահ գիտի, ոչ տեր ու մեծ,
Գրլուխս էսպես տրվավ ջարդեց.
«Չե՛մ տալ, ասավ, իմ հոր ոսկին,

Չեմ տալ կանայքն իմ հայ ազգին,
Սասնա երկիր ձեզ տեղ չրկա . . .
Քու թագավոր, ասավ, թո՛ղ գա,
Թող գա՛ ինձ հետ կրոնիվ անի,
Թե դոչաղ է՛ գոռով տանի»:

Կատաղեց, փրփրեց Մըսրա թագավոր.
— Կանչեցե՛ք, ասավ, իմ գորքը բոլոր.
Հագար հագար մարդ նորելուկ մանուկ,
Հագար հագար մարդ անբեղ, անմորուք,
Հագար հագար մարդ բեղը նոր ծըլած,

Հագար հագար մարդ նոր թախտից ելած,
Հագար հագար մարդ թուխ միրուքավոր,
Հագար հագար մարդ սիպտակ ալևոր,
Հագար հագար մարդ, որ փողեր հրնչեն,
Հագար հագար մարդ, որ թըմբուկ զարկեն...
Կանչեցե՛ք, թող գան, հագնեն գե՛նք, գրրա՛հ,
Կրոնիվ տի գընամ ես Դավթի վրա,
Սասունն ավերեն,
Հեղեղեն, բերեն:

XVIII

Էսպես անհամար գորքեր հավաքեց,

Եկավ Սասնա դաշտ, բանակը զարկեց
Ու ծանրը նըստեց Մըսրա թագավոր:
Էսքան ահագին բազմությունն էն օր
Բաթմանա ջրրին եկավ ու չոքեց,
Ով եկավ, խըմեց—գետը ցամաքեց,
Սասնա քաղաքում մընացին ծարավ:
Ձենով Օհանին զարմանքը տարավ:
Քուրքը ուսն առավ, սարը բարձրացավ.
Սարը բարձրացավ, տեսավ, ի՞նչ տեսավ:
Ճերմակ վըրանից դաշտը ճերմակել,

Ասես՝ էն գիշեր ձըմեռը եկել,
Սպիտակ ձյունով պատել էր Սասուն:
Լեղին ջուր կտրեց, կապ ընկավ լեզուն,
Հարա՛յ կանչելով՝ փախավ տուն ընկավ.
— Վա՛յ, փախե՛ք, եկա՛վ... հա՛յ, հարա՛յ, եկավ...
— Ի՞նչը, հորեղբա՛յր, ի՞նչը, ի՞նչն եկավ...
— Ցավն ու կըրա՛կը Դավթի պինչն եկավ:
Մըսրա թագավոր ելել է, եկել,
Եկել, մեր դաշտին բանակ է զարկել.
Թիվ կա աստղերին, թիվ չկա գորքին...

Վա՛յ մեր արևին, վա՛յ մեր աշխարքին...
Ե՛կ, ոսկին տանենք, աղջիկներ տանենք,
Չոքենք առաջին, պաղատանք անենք,
Գուցե թե գրթա,
Մեզ սըրի չըտա...
— Դու կա՛ց, հորեղբայր, դու դարդ մի՛ անիր.
Գընա՛, քու օդում դու հանգիստ քընիր.
Հիմի ես կելնեմ, Սասնա դաշտ կերթամ,
Մըսրա-Մելիքին պատասխան կըտամ:
Ու գընաց Դավիթ ծանոթ պառավին.

— Նանի ջա՛ն, ասավ, ժանգոտած ու հին
Երկաթի կըտոր, անթարոց, շամփուր,
Ինչ ունես չունես, հավաքի՛ր, ինձ տուր,
Մի էշ էլ գըտիր, որ վըրեն նըստեմ,
Կըռիվ տի գընամ Մըսրա գորքի դեմ:
— Վա՛յ, Դավի՛թ, ասավ, մախ տանի քեզ.
Դո՛ւ պետք է էն հոր զավակը լինե՛ս...
Քու հերն ուներ կըռվի համար

Հըրեղենն ձի, ոսկի քամար,
Ծալ-ծալ կապեն, գուռը պողպատ,

Թամբ սաղափեն, կոռ սաղավարտ,
Խաչ պատրաստին իր աջ բազկին,
Ջրահ շապիկ, Թուր-Կեծակին,
Դու եկել ես, ա՛յ խենթ ու ծուռ,
Ինձնից կուգես Էջ ու շամփո՛ր...
— Ամա՛ն, նանի՛, չեն լրսել դեռ:
Ո՛ր են հիմի իմ հոր գենքեր:
— Հոբեղբորդ գընա հարցուր.
Ո՛ր են, ասա, հանի՛ր, բեր, տուր:
Բան Է, թե որ չըտա սիրով,

Աչքը հանիր՝ խըլիր գոռով:

XIX

Դավիթ գընաց հորեղբոր մոտ.
— Է՛յ հորեղբայր, կանչեց հերսոտ,
Իմ հերն ուներ կըռվի համար
Հըրեղենն ձի, ոսկի քամար,
Ծալ-ծալ կապեն, գուռը պողպատ,
Թամբ սաղափեն, կոռ սաղավարտ,
Խաչ պատրաստին իր աջ բազկին,
Ջրահ շապիկ, Թուր-Կեծակին,
Կըտաս— բեր տուր...

— Վա՛յ, Դավիթ ջա՛ն,
Ահից գոռաց Ձենով Օհան.
Քու հոր մահվան տարուց— օրից
Դուրս չեն հանել ձին ախոռից,
Ոչ սընդուկից Թուր-Կայծակին,
Ջրահ շապիկ, ոսկի գոտին...
Ինձ թող, ամա՛ն, մի՛ սպանիր,
Կուգես— հըրեն, գընա հանի՛ր:

XX

Հագավ Դավիթ զենքն ու զըրահ,
Կապեց գոտին, Թուր-Կեծակին,

Խաչն էլ իր հաղթ բազկի վրա,
Ելավ, հեծավ Առյուծ հոր ձին,
Հոր ձին հեծավ ու մըտրակեց.

Ձենով Օհան լալով երգեց.

— Ափսո՛ս, հագա՛ր ափսոս հրրեղեն մեր ձին,

Ա՛խ, հրրեղեն մեր ձին.

Ափսո՛ս, հագա՛ր ափսոս մեր ոսկի գոտին,

Ա՛խ, մեր ոսկի գոտին,

Ափսո՛ս, թանկ կապեն, որ հագին տարավ,

Ա՛խ, որ հագին տարավ . . .

Դավիթ բարկացավ,

Ձին քշեց, դարձավ,

Օհանը վախեց,

Իր երգը փոխեց.

«Ափսո՛ս, նորելուկ Դավիթըս կորավ.

Ա՛խ, Դավիթըս կորավ»:

Էս որ իմացավ,

Դավիթ մեղմացավ,

Իջավ, Օհանի ձեռքը համբուրեց:

Ձենով Օհանն էլ, ինչպես հայր ու մեծ,

Օրհնեց, խրրատեց նրան հայրաբար,

Դեպի Սասնա դաշտ դրրավ ճանապարհ:

XXI

Սասունցի Դավթին ուներ մի քեռի,

Անունը Թորոս, ահեղ աժդահա:

Սա էլ իմացավ համբավը կրովի,

Մի բարդի ուսին գալիս է ահա:

Գալիս է՝ հեռվից բարձրը գոռալով.

— Ի՛նչ եք վեր եկել էս դաշտի միջում,

Քանի գրլխանի մարդիկ եք կամ ո՞վ,

Սասունցի Դավթին որ չեք ճանաչում...

Բա չե՞ք իմանում, որ Էստեղ Է նա
Գալու՝ խաղացնի իր ձին թևավոր.
Չըքվեցե՞ք, հիմի ուր որ Է՝ կըգա,
Եկել են սրբքեն մեյդանը Էսօր:

Ասավ ու քաշեց իր ուսի բարդին,
Սըրբեց բանակից մի քրսան վըրան...
Դավիթն Էլ ահա սարի գագաթին
Կանգնած՝ գոռում Է վիշապի նըման.

— Ով քընած եք՝ արթուն կացե՞ք,
Ով արթուն եք՝ ելե՞ք, կեցե՞ք,

Ով կեցել եք՝ զենք կապեցե՞ք .
Չե՛նք եք կապել՝ ձի թամբեցե՞ք,
Ձի եք թամբել՝ ելե՞ք, հեծե՞ք.
Հետո չասեք՝ թե մենք քընած —
Դավիթ գող-գող եկավ, գընաց...

Էսպես կանչեց, ասպանդակեց,
Ու, ինչ ամպից կայծակ գարկի,
Մըսրա գորքի մեջտեղ գարկեց,
Շողացնելով Թուր-Կայծակին:

Ջարդեց, փըշրեց մինչև կեսօր.

Կեսօր արինն ելավ հեղեղ,
Քըշեց, տարավ հագարավոր
Մարդ ու դիակ ողջ միատեղ:

Կար գորքի մեջ մի ալևոր,
Աշխարք տեսած ու բանագետ.
— Տըղե՛րք, ասավ, ճամփա տըվեք,
Գընան խոսեն ես Դավթի հետ:

Գընաց՝ կանգնեց Դավթի առաջ,
Էսպես խոսեց Էն ծերունին.
— Դավար կենա՛, կուորդ, ո՛վ քաջ,

Սուրըդ կըտարուկ միշտ քու ձեռին:
Մի ծերունուս խոսքին մըտիկ,

Տե՛ս, քու խելքը ինչ է կըտրում:
Ի՞նչ են արել քեզ էս մարդիկ,
չե՞ր ես սըրանց դու կոտորում:

Ամեն մի՛նը մի մոր որդի,
Ամեն մի՛նը մի տան ճըրագ,
Որը կինն է թողել էնտեղ
Աչքը ճամփին, խեղճ ու կըրակ,

Որը մի տուն լիք մանուկներ,

Որը ծընող աղքատ ու ծեր,
Որը լացով, քողն երեսին
Նորապըսակ շահել հարսին...

Թագավորը գոռով-թրրով
Հավաքել է, էստեղ բերել:
Խեղճ մարդիկ ենք՝ պակաս օրով
Մենք քեզ վընաս ի՞նչ ենք արել:

Թագավորն է քու թըշնամին,
Կրո՞իվ ունես– իր հետ արա,
չե՞ր ես քաշում Թուր-Կայծակին

Էս անճարակ խալխի վըրա:

— Լավ ես ասում դու, ծերունի՛,
Ասավ Դավիթն ալևորին,
Բայց թագավորն ո՞ր է հիմի,
Որ սև կապեն նըրա օրին:

— Մեծ վըրանում քընած է նա,
Է՛ն, որ միջից ծուխը կելնի,
Էն ծուխն էլ հո ծուխ չի որ կա,
Գոլորշին է իր բերանի:

Ասին . դեպի մեծ վըրանը

Ասպանդակեց Դավիթն իր ձին,
Քըշեց, գընաց ու դըռանը
Գոռաց կանգնած արաբներին.

— Ո՞ւր է, ասավ, ի՞նչ է կորել,
Գուրս կանչեցե՛ք, գա ասպարեզ,
Թե մահ չունի՝ մահ եմ բերել,
Գըրող չունի՝ գըրողն եմ ես...

— Մեղիքն, ասին, քուն է մըտել,
Օխտը օրով պետք է քրնի.
Երեք օրն է դեռ անցկացել,

Չորս օր էլ կա, քունը առնի:

— Ի՛նչ, բերել է աղքատ ու խեղճ
Խալխին լըցրել ծովն արյունի,
Ինքը մըտել վըրանի մեջ՝
Օխտը օրով հանգիստ քրնի ...

Քընել-մընել չեմ հասկանում,
Վե՛ր կացրեք շո՛ւտ, դուրս գա մեյդան,
Էնպես դըրան ես քընացնեմ,
Որ չըգարթնի էլ հավիտյան:

Ելան՝ մարդիկ ճարահատված

Շամփուր դըրին թեժ կըրակին
Ու գարկեցին խոր մըրափած
Մըսրա-Մեղքի բաց կըրնկին:

— Օ՛Ֆ, էլ հանգիստ քուն չունի մարդ
Էս անիծված լըվի ձեռից,
Խոր մըրողնչաց հըսկան հանդարտ
Ու շուտ եկավ, քընեց նորից:

Ելան, բերին մեծ գութանի
Խոփը՝ դըրին թեժ կըրակին,
Ու կաս-կարմիր, կեծկըծալի,

Շիկնած տըվին մերկ թիկունքին:
— Օ՛Ֆ, էլ հանգիստ քուն չունի մարդ
Էս անիրավ մոծակներից,
Աչքը բացավ հըսկան հանդարտ,

Ուզում էր ետ քրնել նորից:

Տեսավ Դավթին: Գլուխն ասեղ
Վեր բարձրացրեց մըռընչալով,
Փըչեց վրենն, որ թըռցընի
Էն աժդրհին մի փըչելով:

Տեսավ, տեղից ժած չի գալի,

Չարմանքն ու աս պատեց հոգին:
Արնոտ աչքերն ըսպառնալի
Հատեց խոժոռ Դավթի աչքին:

Նայեց թե չէ, զգաց՝ իր մեջ
Տասը գոնջի ուժ պակասեց:
Պառկած տեղից վրա նստեց
Ու ժպտալով հետը խոսեց.

— Բարով, Դավիթ, հոգնած ես դեռ,
Ե՛կ, մի նստի՛ր, խոսենք կարգին,
Չետո դարձյալ կըռիվ կանենք,

Եթե կըռիվ կուզես կըռկին...

Իր վըրանում բըռնակալը
Քառսուն գազ խոր հոր էր փորել,
Ցանցով փակել մութ բերանը,
Վըրեն փափուկ խալի փըռել:

Ում որ հաղթել չէր կարենում,
Շողոմելով կանչում էր նա,
Նըստեցնում էր իր վըրանում
Էն կորստյան հորի վըրա:

Իջավ Դավիթ ձիուցը ցած,

Գընաց նըստեց... ընկավ հորը.
— Հա՛, հա՛, հա՛, հա՛, քահ-քահ խընդաց
Մըսրա դաժան թագավորը:

— Դե, թող հիմի գընա՛ խավար

Հորում փրթի, Էնքան մընա:
Ու ահագին մի ջաղացքար
Բերավ, դրրավ հորի վըրա:

XXII

Քընեց Էն գիշեր Ձենով Օհանը:
Գիշերն երագում երևաց ծերին՝
Մըսրա երկընթում արև ճառագած,

Սև ամպ էր պատել Սասնա սարերին:

Սաստիկ վախեցած վեր թըռավ տեղից:
— Վա՛յ, կընի՛կ, ասավ, մի ճըրագ արա՛,
Գընա՛ց մեր անփորձ Դավիթը ձեռից,
Սև ամպ էր իջել Սասունի վըրա:

— Հողե՛մ գըլուխդ, ասավ կընիկը,
Ո՛րվ գիտի՝ Դավիթն ո՛ր է քե՛ֆ անում...
Դու էլ քեզ համար քու տանը ընկած՝
Ուրիշի համար երագ ես տեսնում:

Քընեց Օհանը: Վերկացավ դարձյալ.

— Կընի՛կ, Դավիթը նեղ տեղն է ընկած.
Մըսրա վառ աստղը շողում էր պայծառ,
Մեր աստղը հիվանդ ցուլքում դալկացած:

— Ի՞նչ եղավ քեզ, մա՛րդ, գիշերվան կիսին.
Բարկացավ վըրեն կընիկն աղմուկով:
Խաչ քաշեց էլ ետ Օհանն երեսին,
Շուտ եկավ, քընեց խըռոված հոգով:

Մի ուրիշ պատկեր ավելի ահեղ.
Տեսավ երկընթի բարձրը կամարում
Վառվում էր Մըսրա աստղը փառահեղ,

Սասնա աստղիկը սուզվեց խավարում:

Չարթնեց վախեցած:— Տունդ քանդվի, կի՛ն:

Ես ո՞նց լըսեցի քու Էդ կարճ խելքին.
Կորավ մեն-մենակ մեր ջահելն անտեր.
Վե՛ր կաց, շո՛ւտ արա, գենքերըս մի բե՛ր...

XXIII

Ելավ Օհան, գոմը մըտավ,
Ջարկեց ճերմակ ձիու մեջքին.
— Է՛յ, ճերմակ ձի, մինչ ե՞րբ, ասավ,
Կրհասցընես Դավթի կրովին:

«Մինչև լուսը կրհասցընես»,

Ու ձիւն տըվավ փորը գետին.
— Մեջքըդ կոտրի՛, լուսն ի՞նչ անես.
Լաշին հասնես ես թե՞ նաշին:

Կարմիր ձիու մեջքին զարկեց.
Սա էլ երեստ փորը գետին.
— Ջա՛ն կարմիր ձի, մինչ ե՞րբ դու ինձ
Կրհասցընես Դավթի կրովին:

«Մի ժամի մեջ, կարմիրն ասավ,
Կրհասցընես Դավթի կրովին»:
— Լեղի դառնա, սև մահ ու ցավ,

Ինչ տըվել եմ քեզ՝ Էն գարին:

Հերթը եկավ սևին հասավ.
Գետին չերեստ փորը սև ձիւն:
— Է՛յ, ջան Սևուկ, մինչ ե՞րբ, ասավ,
Կրհասցընես Դավթի կրովին:

«Եթե ամուր մեջքիս մընաս,
Ոտըդ դընես ասպանդակին,
Մինչև մեկել ոտըդ շուտ տաս,
Կրհասցընես», ասավ սև ձիւն:

XXIV

Սև ձին քաշեց Ձենով Օհան,

Ձախը դրրավ ասպանդակին,
Աջն էլ մինչև շուռ տար վրրան,
Կանգնեց Սասնա սարի գլխին:

Տեսավ՝ Դավթի նրժույզն անտեր
Սարերն ընկած խրոխրնջալով,
Ներքև Մըսրա գորքը չոքած,
Ինչպես անձեր ծրփուն մի ծով:

Օխտը գոմշի կաշի հագավ,
Որ չըպատոհի իրեն գողից,
Կանգնեց Օհան, ամպի նրման

Գոռաց Սասնա սարի ծերից:

— Հե՛յ-հե՛յ Դավի՛թ, ո՛րտեղ ես դու .
Հիշի՛ր Խաչը քո աջ թևի,
Սուրբ Տիրամոր անունը տո՛ւր,
Ու դուրս արի լույսն արևի...

Ձենը գրնաց դըմբդըմբալով՝
Դավթի ականջն ընկավ հորում.
— Հա՛-հա՛յ, ասավ, հորեղբայրս է,
Սասնա սարից ինձ է գոռում:

Ո՛վ Մարութա Աստվածածին,

Ո՛վ անմահ խաչ պատարագի,
Ձե՛գ եմ կանչել,— հասե՛ք Դավթին...
Կանչեց, տեղից ելավ ոտքի,

Էնպես զարկեց ջաղացքարին՝
Քարը եղավ հագար կըտոր,
Կըտորները երկինք թըռան,
Ու գընում են մինչև Էսօր:

Ելավ հորից, կանգնեց ահեղ,

Սարսափ կալավ դև Մելիքին:
— Դավիթ ախպեր, ե՛կ դեռ էստեղ,

Մեղան նրստե՛նք, խոսենք կարգի՛ն...

— Էլ չեմ նրստիլ ես քի հացին,
Դու տըմարդի, վախկոտ ու նենգ.
Շո՛ւտ, գենքըդ առ, հեծիր քու ձին,
Դո՛ւրս եկ մեյդան, կրո՞իվ անենք:

— Կրո՞իվ անենք, ասավ Մելիք,
Իմն է միայն զարկն առաջին:
— Քոնն է, զարկի՛ր, կանչեց Դավիթ,
Գընաց, կեցավ դաշտի միջին:

Ելավ, կանգնեց Մըսրա-Մելիք,

Իր գուրգն առավ, հեծավ իր ձին,
Քըշեց, գընաց մինչ Դիարբեքիր
Ու Էնտեղից եկավ կրրկին:

Երեք հազար լիդր էր քաշում
Հրսկայական իր մըկունդը.
Եկավ, զարկեց, կորավ փոշում
Ու երերաց երկրի գունդը:

— Երկիր քանդվեց կամ ժաժք եղավ,
Ասին մարդիկ շատ աշխարքում:
— Չէ՛, ասացին, արնի ծարավ

Հրսկաներն են իրար զարկում:

— Մեռավ Դավիթ էս մի զարկից,
Ասավ Մելիք իրեն գորքին:
— Կենդանի՛ եմ, ամպի տակից
Գոռաց Դավիթ Մըսրա-Մելիքին:
— Հա՛յ-հա՛յ, մոտիկ տեղից եկա,
Տե՛ս, ո՛ր տեղից հիմի կըգամ:
Ու վերկացավ, կանգնեց հրսկան,
Իր ձին հեծավ երկրորդ անգամ:

Երկրորդ անդամ քրշեց Հալաբ

Ու բաց թողեց ձին Հալաբից.
Բութ վեր կացավ, տեղ ու տարափ,
Արար աշխարհի դողաց թափից:

Եկավ, զարկեց . զարկի ձենից
Մոտիկ մարդիկ ողջ խըլացան:
— Գընա՛ց Դավիթ Սասնա տանից,
Գուժեց գոռոզ Մըսրա արքան:

— Կենդանի՛ եմ, կանչեց Դավիթ,
Մին էլ արի՛— հերթն ինձ հասավ:
— Հա՛յ-հա՛յ, մոտիկ տեղից եկա,

Կանչեց Մելիք ու վեր կացավ:

Երրորդ անգամ հեծավ իր ձին,
Գընաց մինչև հողը Մըսրա,
Ու էնտեղից, գուրզը ձեռին
Քրշեց, եկավ Դավթի վըրա:

Եկավ, զարկեց բուր ուժով,
Ծանրը զարկով հըսկայական,
Փռչին ելավ Սասնա դաշտից,
Բըռնեց երեսն արեգական:

Երեք գիշեր ու երեք օր

Փռչին կանգնեց ամպի նըման,
Երեք գիշեր ու երեք օր
Բոթը տըվին Դավթի մահվան:

Երբ որ անցավ երեք օրը,
Էն ամպի պես կանգնած փռչում
Կանգնեց Դավիթ, ինչպես սարը,
Գըրգուտ սարը մեզ-մըշուշում:

Մելի՛ք, ասավ, ո՞ւմն է հերթը:

Մարտափ կալավ գոռ Մելիքին,
Մահվան դողը ընկավ սիրտը

Ու տապ արավ գոռոգ հոգին:

Գրնաց, խորունկ մի հոր փորեց,
Իջավ, մըտավ վիհն էն խավար,
Վրբեն քաշեց քառսուն կաշի
Ու քառասուն շաղացի քար:

Մըռնչալով ելավ տեղից
Էն առյուծի առյուծ որդին,
Իր ձին հեծավ ու փոթորկեց,
Խաղաց, շողաց Թուր-Կայծակին:

Առաջ վագեց մագերն արձակ

Մելքի պառավ մայրը ջադու.
— Դավի՛թ, մագըս ա՛ն ոտիդ տակ,
Էդ մի գարկը ի՛նձ բաշխիր դու:

Երկրորդ անգամ թուրը քաշեց .
Էս անգամ էլ եկավ քուրը .
— Դավի՛թ, եթե կուզես, կանչեց,
Իմ սըրտին գա՛րկ երկրորդ թուրը...

Վերջին գարկի ժամը հասավ,
Ելավ Դավիթ երրորդ անգամ.
— Էս մի գարկն ու աստված, ասավ,

Էլ մարդ չըգա, պետք է որ տամ:

Ասավ, ելավ ու փոթորկեց,
Թըռավ, ցոլաց Դավթի հուր ձին,
Ձին փոթորկեց, փայլատակեց
Ու ցած իջավ Թուր-Կայծակին:

Անցավ քառսուն գոմշի կաշին,
Անցավ քառսուն քարերը ցած,
Միջից կըտրեց ժանտ հըրեշին,
Օխտը գագ էլ դենը գրնաց:

— Կենդանի՛ եմ, մին էլ արի՛,

Գոռաց Մելիք հորի տակից:
Դավիթ լըսեց, շատ զարմացավ
Իրեն զարկից, Թուր-Կայծակից...

— Մելի՛ք, ասավ, թա՛փ տուր մի քեզ:

Ու թափ տրվավ Մելիքն իրեն,
Միջից եղավ ճիշտ երկու կես,
Մեկն ընկավ դեսն ու մյուսը դեն:

Էս որ տեսավ Մըսրա բանակ,
Չուր կըտըրվեց ահ ու վախից:
Դավիթ կանչեց.— Մի՛ վախենաք,

Ակա՛նջ արեք հալա դեռ ինձ:

Դուք ըռանչալար մարդիկ, ասավ,
Չուրկ ու խավար, քաղցած ու մերկ,
Հազար ու մի կըրակ ու ցավ,
Հազար ու մի հոգսեր ունեք:

Ի՛նչ եք առել նետ ու աղեղ,
Եկել թափել օտար դաշտեր.
Չէ՞ որ մենք էլ ունենք տուն-տեղ,
Մենք էլ ունենք մանուկ ու ծեր...

Չանձրացե՞լ եք խաղաղ ու հաշտ

Հողագործի օր ու կյանքից,
Թե՞ զրգվել եք ձեր հանդ ու դաշտ,
Ձեր հուճ ու փունջ, վար ու ցանքից...

Դարձե՛ք եկած ճանապարհով,
Ձեր հայրենի հողը Մըսրա.
Բայց թե մին էլ գենք ու գոռով
Վեր եք կացել դուք մեզ վըրա,

Հորում լինեն քառսուն զազ խոր

Թե ջաղացի քարի տակին,—
Կելնեն ձեր դեմ, ինչպես Էսօր,

Սասնա Դավիթ, Թուր-Կայծակին:

Էն ժամանակ աստված գիտի,
Ով մեզանից կըլնի փռշման.
Մե՞նք, որ կելնենք ահեղ մարտի,
Թե՞ դուք, որ մեզ արիք դուշման...

About this digital edition

This e-book comes from the online library [Wikisource](http://wikisource.org)^[1]. This multilingual digital library, built by volunteers, is committed to developing a free accessible collection of publications of every kind: novels, poems, magazines, letters...

We distribute our books for free, starting from works not copyrighted or published under a free license. You are free to use our e-books for any purpose (including commercial exploitation), under the terms of the [Creative Commons Attribution-ShareAlike 3.0 Unported](http://creativecommons.org/licenses/by-sa/3.0)^[2] license or, at your choice, those of the [GNU FDL](http://www.gnu.org/copyleft/fdl.html)^[3].

Wikisource is constantly looking for new members. During the realization of this book, it's possible that we made some errors. You can report them at [this page](#)^[4].

The following users contributed to this book:

- Վազգեն
- Teak
- 24.59.115.230
- Alexander Fischer
- 204.52.215.21
- 128.6.83.46
- Lilitik22

-
1. [↑ http://wikisource.org](http://wikisource.org)
 2. [↑ http://www.creativecommons.org/licenses/by-sa/3.0](http://www.creativecommons.org/licenses/by-sa/3.0)
 3. [↑ http://www.gnu.org/copyleft/fdl.html](http://www.gnu.org/copyleft/fdl.html)
 4. [↑ http://wikisource.org/wiki/Wikisource:Scriptorium](http://wikisource.org/wiki/Wikisource:Scriptorium)